ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀՀ գյուղատնտեսությունում 2011 թվականին գրանցվել են էական դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընթացիկ տարվա հունվար-նոյեմբերին կազմել է 772.9 մլրդ դրամ: Ըստ օպերատիվ տվյալների գնահատման, գյուղատնտեսությունում նախորդ տարվա համեմատ, համախառն արտադրանքի աճը կազմում է ավելի քան 14.0 տոկոս: Տնտեսական աճը գլխավորապես ապահովվել է բուսաբուծության ճյուղի հաշվին, որոշակի աճ է ապահովվել նաև անասնապահության ճյուղում:

2. Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետներում կատարվել են:

3. Վերոհիշյալ միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է առանձին՝ համաձայն ՀՀ վարչապետի 2009թ. սեպտեմբերի 24-ի N803-Ն որոշմամբ հաստատված ձևի (N4):

ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

4. 2011 թվականի ագրարային ոլորտի իրավա-օրենսդրական հիմքերի բարելավման նպատակով՝ նախարարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 6 օրենք և ՀՀ կառավարության 52 և ՀՀ վարչապետի 4 որոշում, ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել 9 օրենքի և ՀՀ կառավարության 1 որոշման նախագիծ:

5. 2011 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգմամբ մշակվել է <<ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը>>, որը հաստատվել է ՀՀ Նախագահի 2011 թվականի մայիսի 18-ի ՆԿ-91-Ն կարգադրությամբ: Նշված հայեցակարգի պահանջների կատարումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է <<ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի իրականացումն ապահովող 2012-2014 թվականների միջոցառումների ծրագիրը>>:

6. Հաշվետու տարում նախարարության նախաձեռնությամբ կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացմանը, դրանց ներմուծման և օգտագործման ծավալների ընդլայնմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բուսաբուծություն

7. 2011 թվականի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 285.2 հազ. հա, նախորդ տարվա 283.6 հազ. հա-ի դիմաց:

8. 2011 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք հացահատիկային տնտեսության և սերմնաբուծության զարգացման միջոցով ուղղվել են վարելահողերի նպատակային օգտագործման և հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Այդ ծրագրերից կարելի է առանձնացնել հետևյալները.

1) <<ՀՀ 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը>>, որի շրջանակներում հաշվետու տարում ՀՀ մարզպետարաններին է բաշխվել սերմարտադրող տնտեսությունների կողմից հետ վերադարձված 2134 և գնված 1183 տոննա՝ ընդհանուր ծավալով 3317 տոննա աշնանացան ցորենի առաջին վերար-

տադրության սերմացու, բացի այդ հանրապետության 225 տնտեսություններին է տրամադրվել 2011 թվականի սեպտեմբերին Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 1150 տոննա էլիտային աշնանացան ցորենի սերմացուից 1100 տոննան՝ 1:2 փոխհարաբերությամբ 2012 թվականի բերքահավաքից հետո հետ վերադարձնելու պայմանով: Նշված ծրագրի և այլ միջոցառումների իրականացման արդյունքում, օպերատիվ տվյալներով, հաշվետու տարվա աշնանը 2012 թվականի բերքի համար ցորենի ցանքի տակ է դրվել 90.12 հազ. հեկտար, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը 17.1 հազ. հեկտարով,

2) <<ՀՀ 2011 թվականի գարու արտադրության զարգացման>>, <<ՀՀ 2011 թվականի գարու սերմարտադրության զարգացման>> և <<ՀՀ 2011 թվականի եգիպտացորենի արտադրության զարգացման>> ծրագրերը, որոնց շրջանակներում համապատասխանաբար հանրապետություն է ներկրվել գարնանացան գարու 1073.08 տոննա էլիտային ու 946.055 տոննա առաջին վերարտադրության և 63 տոննա եգիպտացորենի հիբրիդային սերմացու, որոնք մարզպետարանների միջոցով, պայմանագրային հիմունքներով, հատկացվել են հողօգտագործողներին՝ առաջնայնությունը տալով անապահով տնտեսավարողներին.

4) հիշատակված ծրագրերի իրականացման արդյունքում միայն 2011 թվականի բերքի համար ցանքի տակ են դրվել ավելի քան 17000 հա հացահատիկային մշակաբույսեր:

9. Հաշվետու տարում, օպերատիվ տվյալներով, ցորենի և գարու հավաքված բերքը կազմել է 392.5 հազ. տոննա, նախորդ տարվա բերքի 302.0 հազ. տոննայի դիմաց (աճը կազմել է 30.0 %): Ընդ որում, ցորենի արտադրության ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 20.9, գարունը՝ 43.9 տոկոսով, իսկ բերքատվության աճը կազմել է համապատասխանաբար 35 և 29.6 տոկոս:

10. Զգալի դրական տեղաշարժեր են գրանցվել պտղաբուծության բնագավառում: Աճ է գրանցվել նաև բուսաբուծական մյուս մթերքների արտադրության ուղղությամբ: Բուսաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են ստորև.

(հազ.տոննա)

	2010 թ. փաստացի	**2011թ. օպերատիվ**	**2011թ.-ը 2010թ. նկատմամբ, %**
Ցորեն	183.5	221.8	120.9
Գարի	118.6	170.7	143.9
Բանջարեղեն	707.6	771.5	109.0
Բոստան	132.5	179.6	135.5
Կարտոֆիլ	481.9	548.5	113.8
Պտուղ և հատապտուղ	128.5	234.6	182.6
Խաղող	222.9	229.1	102.8

11. <<Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրով>> ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի 19 համայնքի 1808 հեկտար խոտհարքներում և արոտավայրերում տրակտորային ցրիչներով իրականացվել են մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի աշխատանքներ: Նախարարության կողմից 2011 թվականի գարնանը ձեռք է բերվել 17514 կգ (56.2 մլն դրամ) ցինկի ֆոսֆիդ, որից 17180 կգ անհատույց տրամադրվել է ՀՀ մարզերին՝ մկնանման կրծողների դեմ պայքար կազմակերպելու նպատակով: Համայնքների միջոցով պայքար է իրականացվել 137.4 հազ. հեկտարի վրա: 2011 թվականի աշնանը մարզերին տրամադրվել է 3253 կգ ցինկի ֆոսֆիդ: Այդ խմբաքանակով կրծողների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել 26.0 հազ. հա վարելահողերում և բազմամյա տնկարկներում: Պայքարի աշխատանքները շարունակվում են: Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Արարատի մարզի երկու համայնքին՝ 200 հա տարածության վրա մորեխների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման գործում:

12. Նախարարության <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի կողմից 2011 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ փորձաքննության են ենթարկվել 62.1 հազ. տոննա աշնանացան գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր և տնկիներ:

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1802-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը տրամադրվել է 1 միլիարդ դրամի սուբսիդիա՝ ազոտական պարարտանյութ ձեռք բերելու և գարնանը մատչելի գներով գյուղացիական տնտեսություններին տրամադրելու նպատակով:

Անասնապահություն

13. Անասնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կողմից արոտների և խոտհարքների տնօրինման գործընթացը հստակեցնելու և դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է <<ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը>>: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է <<ՀՀ-ում ոչխարաբուծության զարգացման հայեցակարգը>>, որը սահմանում է առաջիկա տասնամյակում ոչխարաբուծության զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները:

14. Անասնաբուծության ոլորտում կատարված դրական տեղաշարժերը հուսալի նախադրյալներ են ստեղծել 2011 թվականին նախորդ տարվա նկատմամբ արձանագրելու թե անասնագլխաքանակի, և թե անասնաբուծական մթերքների ծավալների որոշակի աճ:

15. Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել հանրապետություն 210 գլուխ տոհմային երինջների ներմուծման և տարաժամկետ վճարման պայմանով անասնապահական տնտեսություններին մատակարարման ուղղությամբ:

16. Նախարարության աջակցությամբ և խորհրդատվությամբ 2011 թվականի ընթացքում առանձին ֆերմերային տնտեսությունների կողմից հանրապետություն են ներկրվել 111 գլուխ ֆլեգվի և սևաբղետ ցեղերի տոհմային կենդանիներ, որոնք ևս կնպաստեն բուծվող կենդանիների ցեղային կազմի բարելավմանը:

17. 2011 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է ավելի քան 141.0 հազար գլուխ ոչխար, որը խթան կհանդիսանա ոչխարաբուծության հետագա զարգացման համար:

18. Օպերատիվ տվյալների համաձայն՝ 2011 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են հիմնական անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: Որոշակիորեն կրճատվել է ձվի արտադրությունը:

19. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները ներկայացվում են ստորև.

	2010 թ. փաստացի	**2011թ. օպերատիվ**	**2011թ.-ը 2010թ. նկատմամբ, %**
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	124.7	127.5	102.2
Կաթ, հազ. տոննա	600.9	611.7	101.8
Ձու, մլն հատ	702.0	647.0	92.2

20. Լավագույն ցուցանիշներ են գրանցվել ձկնաբուծության ոլորտում, և առաջին անգամ ձկան համախառն արտադրության ցուցանիշը գերազանցել է 6.0 հազար տոննայի սահմանագիծը ու կազմել ավելի քան 6.4 հազ. տոննա, ինչը հազար տոննայով գերազանցում է 2010 թվականի նույն ցուցանիշը: Գրեթե 3 անգամ ավելացել է նաև ձկան արտահանման ծավալը և կազմել շուրջ 1200 տոննա:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտ

21. <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 637-Ն որոշմամբ:

22. 2011 թվականի ընթացքում մշակվել, տպագրվել և բոլոր համայնքների անասնաբույժերին են բաշխվել գյուղատնտեսական կենդանիների պատվաստման և հաշվառման

համապատասխան մատյաններ, հաշվառման-հաշվետվության գրքույկներ, ինչպես նաև բաշխվել են մարզային և տարածքային հաշվետվության ձևեր:
23. ՀՀ տարածաշրջանային 850 համայնքային անասնաբույժերի հետ կնքվել են պետական պատվերների շրջանակներում իրականացվող միջոցառումների պայմանագրեր:
24. 2011 թվականին հանրապետության տարածքում իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումները հետևյալ 10 հիվանդությունների դեմ՝ խոշոր եղջերավորների բրուցելիոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, պաստերելիոզ, դաբաղ, էմկար, մանր եղջերավորների՝ բրուցելիոզ, սիբիրախտ, դաբաղ, բրազդոտ, խոզերի՝ ժանտախտ, թռչունների՝ նյու-քասլ: Ընդհանուր առմամբ իրականացվել է 6.639 մլն պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանիների և 1.756 մլն թռչունների պատվաստումներ:
25. Գյուղատնտեսական նշանակության 199.1 հազ. հա հողատեսքերում իրականացվել է բուսասանիտարական մոնիթորինգ, որը նպատակաուղղված է բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերմանը, հաշվառմանը, տարածվածության արեալների ու տնտեսական վնասակարության շեմերի ճշտմանը, տարածման կանխարգելմանը: Մոնիթորինգի արդյունքները հիմք են հանդիսացել բուսասանիտարական միջոցառումները լիարժեք կազմակերպելու համար:
26. Ողջ վեգետացիոն ժամանակաշրջանում համայնքների հողօգտագործողներին ցուցաբերվել է աջակցություն, մասնագիտական խորհրդատվություն՝ բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման գործում:
27. Սննդամթերքի անվտանգության ոլորտի հետ կապված կազմակերպվել են սեմինար - դասընթացներ տնտեսավարող սուբյեկտների համար:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>

28. Մթերումների գործընթացը համակարգված կազմակերպելու նպատակով նախարարությունում կազմակերպվել են հանդիպումներ՝ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև կատարվել են այցելություններ մթերող ընկերություններ: ՀՀ Արմավիրի և Արարատի մարզպետարաններում կազմակերպվել են մարզպետների և ՀՀ գյուղատնտեսության նախարարի համատեղ խորհրդակցություններ վերը նշված մարզերի խաղող մթերող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:
29. Հաշվետու տարվա մթերման ժամանակաշրջանում պտուղբանջարեղեն, խաղող և կաթ մթերող ու վերամշակող ընկերություններին առավել մատչելի պայմաններով վարկեր տրամադրելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության, առևտրային բանկերի, ունիվերսալ վարկային կազմակերպությունների և վերը նշված ոլորտների ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել են 3 կոնֆերանսներ:
30. Մշակվել և պտուղբանջարեղեն, խաղող ու կաթ վերամշակող ընկերություններին են տրամադրվել պտուղբանջարեղենի, խաղողի և կաթի գնումների պայմանագրերի օրինակելի ձևեր, առաջարկվել է դրանց հիման վրա գյուղացիական տնտեսությունների հետ կնքել հումքի գնման պայմանագրեր և հնարավորության սահմաններում վերջիններիս տրամադրել կանխավճար, սերմացու, պարարտանյութ, թունաքիմիկատներ կամ այլ օժանդակություն:
31. ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի ապրիլի 30-ի N 63-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ մթերման գործընթացում առաջացած խնդիրներին օպերատիվ լուծում տալու, գյուղացիական տնտեսությունների հետ պայմանագրեր կնքելու, պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի և իրականացվող մթերման գործընթացի նկատմամբ հսկողություն սահմանելու և մթերումների վերաբերյալ ամենօրյա օպերատիվ տեղեկատվություն հավաքագրելու և ամփոփելու նպատակով:

32. Մթերումների նախապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքների ու ձեռնարկված միջոցառումների արդյունքում դրանք անցան բավականին կազմակերպված և առանց լուրջ խոչընդոտների, և վերամշակող ընկերությունները գնեցին գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկված գյուղատնտեսական մթերքների ողջ քանակությունը:
33. Հաշվետու տարում վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 51 հազ. տոննա բանջարեղեն, 14.3 հազ. տոննա պտուղ, որոնք գերազանցում են նախորդ տարվա մթերումների ծավալները համապատասխանաբար 1.7 և 3.9 անգամ:
34. Խաղողի մթերումներն իրականացվել են շուրջ 40 ընկերությունների կողմից: Մթերվել է 128.9 հազ. տոննա հումք: Կարևոր է նաև այն փաստը, որ վերամշակող ընկերությունների կողմից ընթացիկ տարում խաղողի 1 կիլոգրամը գնվել է 130 դրամից ոչ պակաս գնով, միջին գինը կազմել է 132.0 դրամ՝ նախորդ տարվա 124.4 դրամի դիմաց:
35. Հաշվետու տարվա գյուղատնտեսական մթերքների մթերումներն աչքի են ընկել վճարումների աննախադեպ մակարդակով: 2011 թվականին պտուղբանջարեղենի մթերումների դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ, իսկ խաղողինը՝ 99.7 տոկոսով:
36. 2011 թվականին հանրապետությունից արտահանվել է 16.88 հազ. տոննա պտուղբանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 35.2 %-ով:
37. Գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացին աջակցելու նպատակով, սկսած 2011 թվականի օգոստոսի 21-ից, Երևան քաղաքում, Կասյան փողոցի վերին հատվածում, յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին կազմակերպվել են գյուղատնտեսական մթերքների տոնավաճառներ, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսական մթերքների իրացմանը՝ առանց միջնորդների և գյուղացիների համար հավելյալ ծախսերի: Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 36 տոնավաճառ, մեկ տոնավաճառի ընթացքում գրանցվել է միջինը 8000-9000 այցելու: Տոնավաճառներին մասնակցած գյուղացիական տնտեսությունների քանակը 1417 է, որոնք ներկայացնում են 242 գյուղական համայնք: Մեկ տոնավաճառի ընթացքում վաճառվել է միջինը 40-45 տոննա մթերք:

<u>Արտադրատեխնիկական սպասարկումներ</u>

38. Հաշվետու տարում սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել է ճապոնական դրամաշնորհի հաշվին հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի (61 միավոր տրակտորներ) և գյուղմեքենաների իրացման գործընթացը:
39. Շարունակվել է Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված Պաշտոնական Օգնություն (ODA) <<Դրամաշնորհային աջակցություն սակավապահով ֆերմերներին>> (նախկինում 2KR) դրամաշնորհային ծրագրի իրականացման գործընթացը: Սահմանված կարգով մշակվել և ճապոնական կողմին է ներկայացվել 2012 թվականի համար նախատեսված դիմում-հայտը:
40. Առկա գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի նորացման նպատակով <<Ռոսագրոմաշ>> ասոցիացիայի ներկայացուցիչների հետ կազմակերպվել է հանդիպում նախարարությունում և ՀՀ կառավարությունում: Փոխշահավետ համագործակցությունը շարունակելու նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ Ռուսաստանի Դաշնության <<Կոմբայնի գործարան <<Ռոստսելմաշ>> ՍՊԸ-ի, <Ռոսագրոլիզինգ> ընկերության ներկայացուցիչների հետ:

<u>Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում ծրագիր</u>

41. «Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում» ծրագրով իրականացվել են հետևյալ աշխատանքները.
1) Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի վտանգավոր հատվածների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և Արաքս գետի ափամերձ տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծում.

2) Արարատի մարզում Արաքս գետի վթարված արգելաթմբի վերականգնում երկու սահմանային նշանների հատվածում, Հրազդան-Արաքս կոլեկտորի Արաքս գետի հետ միացման հանգույցի վերականգնում մեկ սահմանային նշանի հատվածում.
3) Արմավիրի մարզում Արաքս գետի վթարված արգելաթմբի վերականգնում երկու սահմանային նշանի հատվածներում:
42. Աշխատանքների իրականացման արդյունքում Արաքս գետի վարարման ժամանակ կկանխվի վերոհիշյալ հատվածներում ափապաշտպան արգելաթմբի հետագա քայքայումն ու փլուզումը, առափնյա հողատարածքները զերծ կմնան ողողումներից:
43. Աշխատանքներ են տարվել ՀՀ Արմավիրի, Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում մի շարք ջրատնտեսական կառույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման ուղղությամբ:

Գիտության ոլորտ

44. ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում ներկայումս գործում են <<Երկրագործության գիտական կենտրոն>>, <<Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ները և <<Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան>> ՊՓԲԸ-ն:
45. Գիտական կազմակերպություններում 2011 թվականի ընթացքում կատարվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 3 բազային ֆինանսավորմամբ ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի ու 3 պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներ, որոնց շրջանակներում գիտական հետազոտությունները հիմնականում իրականացվում են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման, դրանց մշակության բնակլիմայական գոտիների ընդլայնման և այլ ուղղություններով:

Կրթության ոլորտ

46. Հանրապետության 6 մարզերում (ՀՀ Կոտայք, Արարատ, Լոռի, Գեղարքունիք, Շիրակ, Սյունիք) և Երևան քաղաքում գործող 8 գյուղատնտեսական քոլեջներն ապահովում են տվյալ տարածաշրջանի արտադրատնտեսական և տեխնոլոգիական առանձնահատկություններին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման գործընթացի իրականացումը: Հինգ քոլեջներում (Մասիսի, Գորիսի, Գավառի, Նոր Գեղիի և Վանաձորի) իրականացվում է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն: Քոլեջները կադրեր են պատրաստում միջին մասնագիտական կրթության՝ 19 և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2 մասնագիտությունների գծով:
47. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին 2011/2012 թթ. ուսումնական տարվա առկա ուսուցման ընդունելության համար հատկացվել է միջին մասնագիտական կրթության 252 և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 80 անվճար ուսուցմամբ տեղ: Քոլեջներ են ընդունվել 683 դիմորդ, որից միջին մասնագիտական կրթությամբ՝ 603 (անվճար ուսուցմամբ 252, վճարովի ուսուցմամբ 351), նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ՝ 80 դիմորդ: Ներկայումս քոլեջներում սովորում են ընդամենը 2033 ուսանող:

Խորհրդատվության ոլորտ

48. Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների կողմից հանրապետության 10 մարզում անցկացվել է 1566 սեմինար և 971 դաշտային ուսուցում: Իրականացվել է 17877 խորհրդատվական միջոցառում, 215 փորձացուցադրական աշխատանք, տպագրվել են 484 անվանումով տեղեկատվական թերթիկներ ու գրքույկներ՝

107454 ընդհանուր տպաքանակով, թողարկվել է 146 համար թերթ՝ 194050 տպաքանակով, հեռարձակվել է 126 ռադիոհեռուստահաղորդում:
49. Մարզերում իրականացվել են <<Տեխնոլոգիաների գնահատման>> 31 ծրագիր, որոնց մոնիթորինգի արդյունքները լուսաբանվել են <<Ագրոլրատու>> թերթի համարներում, պատրաստվել և եթեր են հեռարձակվել հեռուստահաղորդումներ:
50. Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից պարբերաբար տարվել են խորհրդատվական աշխատանքներ՝ մարզերում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման ուղղությամբ:
51. ԳԱՄԿ-երի մասնագետները ՀՀ հանրային խորհրդի հետ համատեղ հանրապետության 3750 գյուղացիական տնտեսություններում իրականացրել են հողատարածքների մոնիթորինգ՝ վարելահողերի չմշակման պատճառների ուսումնասիրման ուղղությամբ: Մասնակցություն է ցուցաբերվել հանգստյան օրերին գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպմանը:
52. Խորհրդատվական համակարգը հզորացել է ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ: Մշակվել և իրականացվել են <<Հայաստանում խորհրդատվական և հետազոտական տեղեկատվության և հաղորդակցման վիրտուալ ցանցի հիմնում>> ծրագրի 2-րդ փուլի աշխատանքները, որոնց իրականացման համար, շահառուների կարիքներից ելնելով, տեղադրվել են անհրաժեշտ սարքավորումներ: Վեբ-կայքերի միջոցով վիրտուալ եղանակով իրականացնում են խորհրդատվության մատուցման և տեղեկատվության տարածման աշխատանքներ:
53. ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N 382-Ն որոշմամբ ստեղծվել է <<Գյուղատնտեսության շտապ օգնությունը>>, որի նպատակն է արագ արձագանքել ՀՀ ագրարային համակարգում գործող տնտեսավարողների հարցադրումներին և հնարավորինս լուծում տալ բարձրացված խնդիրներին: ԳԱՄԿ-երում ստեղծվել են <<Շտապ գյուղատնտեսական օգնության>> շտաբեր: Հաշվետու տարում հեռախոսային կարճ հաղորդագրությունների միջոցով հանրապետությունում տեղեկատվություն է տարածվել գյուղատնտեսությունում սպասվող ցրտահարությունների, ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

<u>Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում</u>

54. 2011 թվականին մեծ աշխատանքներ են տարվել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին մատչելի պայմաններով վարկավորման ուղղությամբ: ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին համապատասխան գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որի 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ առավել կարիքավոր 225 համայնքի համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Ծրագրի երկու փուլերով տրամադրվել է ավելի քան 25 հազ. միավոր վարկ՝ 17.4 մլրդ դրամ գումարով:

<u>Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում</u>

55. Հաշվետու տարում որոշակի աշխատանքներ են տարվել գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորմանն աջակցության և դրանց կարողությունների ուժեղացման ուղղությամբ: Մասնավորապես՝
1) կոոպերատիվների գործունեությունը խթանելու նպատակով ճապոնական դրամաշնորհի հաշվին ներմուծված 61 միավոր տրակտորները մատչելի պայմաններով տրամադրվել են գյուղատնտեսական կոոպերատիվներին և գյուղատնտեսությունում համատեղ գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին.
2) <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության**>> վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության անասնապահությամբ

մասնագիտացված 5 մարզի 33 համայնքներում ստեղծվել են սպառողական կոոպերատիվներ: Նշվածից բացի հանրապետության տարբեր մարզերում նախարարության խորհրդատվական համակարգի աջակցությամբ ստեղծվել են ևս 22 գյուղատնտեսական կոոպերատիվ.

3) ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է <<**ՀՀ գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգը**>> (ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի, N43 արձանագրային որոշում), որի դրույթների համաձայն գյուղացիական տնտեսությունների խոշորացման կարևոր ուղղություններից է համարվել կոոպերացիայի խթանումը և այդ ուղղությամբ նպատակային պետական քաղաքականության իրականացումը:

Միջազգային համագործակցություն

56. Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Կոդեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովի, Համաշխարհային Բանկի, Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի, OPEC Միջազգային զարգացման հիմնադրամի, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության և ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի հետ:

57. Շարունակվել են աշխատանքները ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից տեխնիկական համագործակցության թվով 5 ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ստորագրվել և գործողության մեջ է մտել <<Գենետիկական ֆոնդի պահպանման նպատակով ծիրանի կոլեկցիոն այգիների հիմնում>> նոր ծրագիրը:

58. Կարևոր դեր է հատկացվել տարածաշրջանային համագործակցության հարցերին՝ Սևծովյան Տնտեսական Համագործակցության (BSEC), Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոն (ICARDA), որի արդյունքում իրականացվել են գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ծրագրեր:

59. 2011 թվականին ակտիվ աշխատանքներ են տարվել առևտրատնտեսական հարցերով միջկառավարական մի շարք հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության ապահովման ուղղությամբ:

60. Նախարարությունն աջակցել է հանրապետությունում ագրովերամշակման բնագավառի տնտեսավարող սուբյեկտներին Հայաստանում և արտասահմանում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար:

61. 2011 թվականի հոկտեմբերի 14-16-ը Երևանում կազմակերպվել է <<Հայագրոֆորում>> միջազգային համաժողովը:

Տեսչական գործունեություն

62. Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից իրականացվել են գյուղատնտեսական տեխնիկայի գրանցման, պետհամարանիշների հատկացման, տեխնիկայի տարեկան զննման, տեխնիկայի վերագրանցման, տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի հատկացման աշխատանքներ:

63. Հանրապետության սեփականատերերին ծառայությունների մատուցման որակի բարձրացման, ընթացակարգերի թափանցիկության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ՀՀ կառավարության 24.02.11թ. N 160-Ն որոշմամբ վերացվել է գյուղատնտեսական տեխնիկայի տարեկան տեխնիկական զննության պարտադիր պահանջը, ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել տրակտորիստ-մեքենավարին վարման իրավունքի տրամադրման նոր ընթացակարգը, որով պարզեցվել է գործընթացը և ներդրվել է հարցաշարերի թեստային համակարգը (ՀՀ կառավարաության 24.03.2011թ N307-Ն որոշում): Ընդունվել է գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման պարզեցված ընթացակարգը:

Լիցենզավորման ոլորտ

64. Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնելու լիցենզավորմամ 11 հայտ, որից տրամադրվել է 9 լիցենզիա:

65. ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամաններով հաստատվել է գյուղատնտեսության ոլորտում լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը և լիցենզավորման ընթացակարգը:

Անտառային տնտեսություն

66. 2011 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<անտառտնտեսություն>> մասնաճյուղերում իրականացվել է անտառմշակույթների տնկում 28.4 հա տարածքում: Իրականացվել է նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 462.3 հա, ինչպես նաև անտառմշակույթների խնամք 1089 հա տարածքի վրա: Հիմնադրվել է 2.1 հա տնկարան:

67. 2011 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հատումներից իրացվել է 29.0 հազ. խմ փայտանյութ, որից շինափայտ՝ 1.86 հազ. խմ: Թափուկից իրացվել է 10.2 հազ. խմ:

68. 2011 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ <<անտառտնտեսություն>> մասնաճյուղերից ստացվել է 113 անտառխախտման արձանագրություններ, որոնցից 110-ը՝ 1197 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ:

69. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է <<Հայաստանի Հանրապետության անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների կողմից ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակներով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման համար բնօգտագործման վճարի գծով արտոնություն սահմանելու մասին>> որոշումը (ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N1535-Ն որոշում), ինչպես նաև նշված որոշման պահանջներին համապատասխան ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության նախարարների համատեղ հրամանով հաստատվել է ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի ցանկը և ՀՀ գյուղատնտեսության ու ՀՀ բնապահպանության նախարարների համատեղ հրամանով հաստատվել է ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտի մթերման և բացթողման կարգը:

Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող վարկային ծրագրեր

70. <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> վարկային ծրագրի Ֆինանսական համաձայնագիրը ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվել է 2011 թվականի ապրիլի 1-ին, վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ է մտել 2011 թվականի հուլիսի 26-ին: Մինչև Ծրագիրն ուժի մեջ մտնելը նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ստացված ռետրոակտիվ միջոցների հաշվին:

71. Ըստ բաղադրիչների 2011 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ

- 2011 թվականի ծրագրով նախատեսված ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 25 համայնքի փոխարեն ընտրվել է 49 համայնք):
- Ծրագրի մասին տեղեկությունների տրամադրման, սկզբունքների ներկայացման, կոոպերատիվի գաղափարի ներդրման, «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանների մշակման և իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր համայնքում կազմակերպվել է 6-8 հանդիպում,
- Նշված 6 մարզի 28 համայնքի համար մշակվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլաններ,

- Ընդգրկված մարզերի 45 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ (որից 33-ը պաշտոնապես գրանցվել է) ու «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ,
- Ընդգրկված մարզերի 34 համայնքի համար սկսվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որից 27-ի համար ստացվել է նախագծերի դրական փորձաքննության եզրակացությունը, իսկ մնացած 7 համայնքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն ավարտվել է և սկսվել են այդ համայնքների արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները, որից երեք համայնքում դրանք ավարտվել են:
- Իրականացվում են 50 համայնքի կերահանդակների քարտեզագրման, գնահատման և կենդանիների հերթափոխ արածեցման սխեմաների մշակման աշխատանքները:

2) Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում

«Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչ

<u>Նորարարական ծրագրերի ներդրում</u>

Գիտական հաստատությունների կողմից մշակված նորարարական առաջարկությունները ֆերմերային տնտեսություններում փորձարկելու, ցուցադրելու և տարածելու նպատակով հաստատվել է 32 տեխնոլոգիաների գնահատման ծրագիր, որից 31-ը գտնվում է ավարտական փուլում:

<u>Ուսուցողական դասընթացների կազմակերպում</u>

ՀՀ 10 մարզի ԳԱՄԿ-երի գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով ըստ ժամանակացույցի տարվա ընթացքում դասընթացներ են իրականացվել ՀՀ Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում:

<u>Ֆերմերներին խորհրդատվության տրամադրում</u>

ՀՀ Սյունիքի մարզում 2011 թվականի սեպտեմբեր ամսից հեռախոսային կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով ֆերմերներին օպերատիվ տեղեկատվություն է տրամադրվում: Այս պիլոտային ծրագիրն ընդգրկում է 92 համայնք:

3) Մրցակցային դրամաշնորհների (ՄԴ) ծրագիր

2011 թվականի ապրիլի 6-ին հայտարարվել է ՄԴ ծրագրի առաջին փուլի մրցույթը: Մրցույթի առաջին փուլին մասնակցած շահառուների կողմից ստացվել է 37 հայտ-ծրագիր, որից հաղթող է ճանաչվել 8-ը:

Նշված 8 ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել 120 մշտական աշխատատեղ: Ծրագրի արդյունքներից կօգտվեն մոտ 300 անուղղակի շահառու, ինչը խոսում է նշված ծրագրերի տեխնոլոգիաների փոխանցման և տարածման բարձր մակարդակի մասին:

2011 թվականի հոկտեմբերի 28-ին հայտարարվել է ՄԴ ծրագրի երկրորդ փուլի մրցույթը:

71. ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի N 1572-Ա որոշմամբ հիմնադրվել է <<Հայկական Միրգ>> բաց բաժնետիրական ընկերությունը:

Ընդհանուր առմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2011 թվականի գործունեությունը նպատակաուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան՝ աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: